



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԵՐԱՅԻԱ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, Երևան, Վ. Սարգսյան փող. 26/3, հեռ.՝(010) 54 52 37; ֆաքս՝(010) 52 31 08, Էլ. փոստ՝ hamk@hamk.am, www. hamk.am

12.11.2021թ. 02-01/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՀԵՐԻՔՆԱԶ ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Տիգրանյան,

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (փաստաթղթի կոդ Կ-083-05.11.2021-ԱՍ-011/0) վերաբերյալ ներկայացնում ենք Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի առաջարկությունները և դիտողությունները.

1. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի բովանդակությունից ենթադրվում է, որ աշխատողն աշխատանքի ներկայանալիս բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (ԿՈՎԻԴ-19) տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով նախատեսված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող բոլոր փաստաթղթերը միաժամանակ պետք է ներկայացնի, սակայն աշխատողը պետք է գործատուին ներկայացնի կա՛մ ԿՈՎԻԴ-19-ի դեմ պատվաստումը հավաստող սերտիֆիկատ, կա՛մ ԿՈՎԻԴ-19-ի ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող, կա՛մ բացարձակ և ժամանակավոր բժշկական հակացուցումներ ունենալու՝ փաստը հավաստող փաստաթղթեր: Ուստի, առաջարկվում է հստակեցնել Նախագծի 1-ին հոդվածը:

2. Առաջարկվում է Նախագծում կատարել լրացում, որով կսահմանվի, որ աշխատողը, պահպանելով աշխատավարձը, ազատվում է աշխատանքային

պարտականությունների կատարումից պատվաստման օրը և դրան հաջորդող ոչ ավել քան 3 օր: Այս լրացումը հնարավորություն կընձեռի աշխատողներին վերականգնել իրենց առողջական վիճակը և աշխատունակությունը մինչ աշխատանքի վերադառնալը:

3. Գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող կանխարգելել կորոնավիրուսային հիվանդության տարածումը, ձևավորել կոլեկտիվ իմունիտետ Հայաստանի Հանրապետությունում, քանի որ համաձայն Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-օգոստոսին» վիճակագրական հրապարակման տվյալների՝ 2021 թվականի հուլիսի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված է 652395 աշխատող, որը կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհամենը 22 տոկոսը: Բնակչության 22 տոկոսի պատվաստումը չի ապահովելու Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված ԿՈՎԻԴ-19 գլոբալ պատվաստմանը հասնելու ռազմավարության իրականացման պլանը, որն է մինչև 2021 թվականի վերջ բոլոր երկրների բնակչության 40 տոկոսի պատվաստում, իսկ մինչև 2022 թվականի կեսը՝ 70 տոկոսի¹:

4. Աշխատանքի միջազգային կազմակերպության 22 հոկտեմբերի 2021 թվականի թիվ 220 Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացված գրությամբ² նշվել է, որ.

1) «Աշխատանքի միջազգային չափորոշիչներում տեղ գտած պատվաստմանը վերաբերող մի քանի հղումներն այն դիտարկում են ավելի շատ որպես աշխատողի իրավունք, քան պարտականություն», սակայն գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները կարելի է համարել աշխատողների համար ավելի շատ պարտականություններ, այլ ոչ թե իրավունքներ, որոնք կարող են հանգեցնել Աշխատանքի միջազգային կազմակերպության գրության հետ անհամապատասխանության:

¹ <https://www.who.int/ru/news/item/07-10-2021-who-un-set-out-steps-to-meet-world-covid-vaccination-targets>

² «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագիծը:


2) ««Զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք՝ հանուն խաղաղության և դիմակայության» 2017թ. Հանձնարարականի (No. 205) համաձայն, սոցիալական երկխոսությունն էական կարևորություն ունի ճգնաժամային իրավիճակների, օրինակ՝ COVID-19 ճգնաժամի, արձագանքմանն ուղղված քաղաքականությունների մշակման, ներդրման, մշտադիտարկման և վերանայման բոլոր գործընթացներում այնպես, որ դրանք հիմնված լինեն աշխատանքի ոլորտում իրավունքների պահպանման վրա, որոնք համապատասխանեցված են ազգային հանգամանքներին և որոնց հետ կապված տեղական մակարդակում առկա է պատասխանատվություն, մինևույն ժամանակ սատարելով կայուն ձեռնարկություններին՝ ապահովելու նրանց բիզնես գործառնությունների շարունակականությունը»:

Համաձայն վերոհիշյալի՝ գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ապահովել աշխատանքի ոլորտում աշխատանքային իրավունքների պահպանումը, ինչպես նաև բիզնեսի գործառնությունների շարունակականությունը:

3) «Հարկ է նկատել, որ աշխատանքի անվտանգությանը և առողջությանն ուղղված կանխարգելման կամ վերահսկողության ցանկացած միջոցառում չպետք է ենթադրի աշխատողների համար որևէ ծախս (Հայաստանի կողմից չվավերացված Աշխատանքի անվտանգության և առողջության կոնվենցիա, 1981թ. No. 155, Հոդված 21): Այս իմաստով, կարծեք թե ներկայիս ազգային կարգավորումները, որոնց հղում է արվում Աշխատանքային օրենսգրքի լրացումներում և փոփոխություններում, մասնավորապես՝ 2021թ. օգոստոսի 20-ի Առողջապահության նախարարի N 65-Ն հրամանը 4.1 կետով պահանջում է, որ չպատվաստված աշխատողները վճարեն երկու շաբաթը մեկ անցկացվող պարտադիր COVID-19-ի ՊՇՌ թեստի համար: Ըստ երևույթին, սա չի համապատասխանում ԱՄԿ թիվ 155 կոնվենցիայի պահանջներին»:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ հարկ ենք համարում նշել նաև, որ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն: »:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝


Է. Դ. ԱՐԴ ԹՈՒՍԱՍՅԱՆ